

օտարներ զանազան երկիրներէն, ի մէջ այլոց նաեւ հայեր:

Երբ 1914ին Բելգիայի չէզոքութիւնը սուրբ տակ տալով անողորմ թշնամին երկիրը պատերազմական դաշտի վերածեց, Բրիւքէլի համալսարանն էլ ստիպուած էր իր դռները փակել, որոնք վերստին բացուեցան Դաշնակիցներին հետ միասին մեծ Յաղթութիւնից յետոյ: Նրա նիւթական միջոցները բոլորովին սպառուած էին եւ ահա մի նոր եւ առատաբուլիս աղբիւր նորից կենդանութիւն տուեց, նոր ոգի ներշնչեց նրան:

Պատերազմի ընթացքում Բելգիական ժողովուրդը սովի ճիրաններից պահպանելու համար ամերիկացիք հիմնել էին մի նպատամատոյց Յանձնաժողով՝ Commission for Relief in Belgium, որի գլխավոր ղեկավարն էր Միացեալ Նահանգների ներկայ նախագահը Հերբերտ Հուվէր: Պատերազմը վերջանալուց յետոյ այս Յանձնաժողովը շարունակեց իր գոյութիւնը բայց տարբեր եւ նոյնպէս արդիւնաշատ յատկապէս կրթական մեծ ծրագրով: Նրանից ծագեցին երկու մեծ բարեգործական հաստատութիւն, որոնց մէկը կոչուեց «Համալսարանական հաստատութիւն» (Fondation Universitaire), իսկ միւսը «Ինտերիական նպատամատոյց Յանձնաժողովի կրթական հաստատութիւն» (C. R. B. Educational Foundation): Դրանցից օգտուողը գլխավորապէս Բրիւքէլի համալսարանն էր: Առաջին հաստատութիւնը նուէր ստացաւ 1922ին Ամերիկայից ոչ պակաս քան 15 միլիոն դոլլար, որի վրայ աւելացան Բելգիական նուէրներ դրամով եւ հողով եւ ահա հին շինութեան տեղ, Բրիւքէլի ամենաօդատուն վայրի վրայ, սկսան բարձրանալ հոյակապ ընդարձակ շէնքեր, որոնք կազմեցին համալսարանական մի ամբողջ քաղաք — Cité Universitaire, որի փողոցին էլ ըստ պատշաճի՝ Avenue des Nations անունը տրուեց: Եւ 1930 Յունիս 25ին «Ազատ Համալսարանը» կատարեց իր պաշտօնական հանդիսաւոր բացումը նորակառուց շինութիւններէ մէջ, ներկայութեամբ ընդհանուրից սիրուած ու յարգուած Բելգիական ասպետ-արքայ (le roi chevalier) Ալբերտ Ա.ի:

Այժմ գանք մեր ամբիոնին: Այս 1930 տարին Բելգիայի քաղաքական անկախութեան (Հոլլանդայից բաժանման) հարկւրամեակն էր եւ ամբողջ երկիրը մեծ հանդէսներով տօնեց այդ մեծ դէպքը: Մի հայրենասէր եւ ուսումնասէր եւ Բելգիացի, Անվերսի մի հարուստ նաւատէր՝ Բոբերտ Վէռնէր (Robert Werner) ուղեց շոշափելի կերպով յաւերժացնել այդ տօնը եւ մի նոր նուիրատուութիւն արաւ ի նպատակ Բրիւքէլի համալսարանի: Նա կամեցաւ, որ այս «Ազատ Համալսարանը» ունենայ նաեւ իր «Արեւելագիտութեան ֆիլիալը» (Institut Oriental) եւ այդ նպատակի համար յատկացրեց տարեկան

175.000 Փրանքի մի դումար: Այս նոր ճիւղը պիտի կցուէր Փիլիսոփայութեան եւ Գրականութեան ճիւղին եւ պիտի բովանդակէր Մերձաւոր Արեւելքի եւ Եգիպտական հնութեանց վերաբերեալ զուտ գիտական ուսումնասիրութիւններ, առանց որեւէ նիւթական օգուտի ակնկալութեան: Նուիրատուն շեշտում էր, որ այդ նպատակով հաստատուելիք ամբիոնները պէտք է իրենց գոյութիւնը պահպանեն, եթէ նոյն իսկ յաճախող ունկընդիւններ չունենային:

Այդ ժամանակ՝ այս բարեպատեհ ամբիոց օգտուեց Փիլիսոփայութեան եւ Գրականութեան ճիւղի աւագը (Doyen) Պրոֆ. Հանրի Գրէգուար (professeur Henri Grégoire) եւ համոզեց պ. Վէռնէրին որ իր նուիրատուութեան մէջ հաստատուն կերպով տեղ յատկացնէ Հայագիտութեան (Arménologie) եւ բարերարը հաճութեամբ ընդունելով առանձնապէս շեշտեց այդ՝ իր գրաւոր նուիրաբերութեան մէջ: Պրոֆ. Գրէգուար՝ եւրոպական հռչակ վայելով Բիւքարէստէս է եւ մինչեւ ցարդ էլ շատ պարագաներում արդէն ցոյց էր տուած իր հայասիրութիւնը: Բայց իբրեւ գիտնական էլ համոզուած է, որ Բիւզանդական պատմութիւնը ճշգրտէն եւ լիապէս պարզելու եւ աւանդելու համար անհրաժեշտ է ծանօթանալ մերձակայ երկիրների պատմութեան եւ ուսումնասիրել նրանց լեզուները, եւ թէ հետեւաբար բիւզանդագէտները սերտ աշխատակցութիւն պէտք է ունենան միւս արեւելագէտներին՝ ասորագէտներին, արաբագէտներին եւ հայագէտներին հետ: Նա մասնակցել է բոլոր արեւելագէտների համագումարներին, ինչպէս այս (1930) տարի Վիեննայում եւ Աթէնքում կայացածներին: Նա յաճախ հրաւիրուած է դասախօսութիւններ կարդալ միջազգային բարձրագոյն գիտական շրջաններում եւ նորերս Փրանսական կառավարութիւնն էլ Légion d'honneurի պատուանշանը շնորհեց նրան: Նա հրատարակում է Բրիւքէլում՝ բիւզանդական ուսման նուիրուած Bizantion ծանօթ գիտական հանդէսը:

Բրիւքէլի համալսարանում վերջին տարիները բացուած էին լիակալ եւ ուսակալ ամբիոններ՝ շնորհիւ լեհական կառավարութեան նպատակին եւ մասնաւոր նուիրատուութիւնների: Այժմ պիտի ունենանք նաեւ հայերէնի ամբիոն: Այս մասին հարկ եղած բոլոր ձեւակերպութիւններն արդէն կատարուած են: Վէռնէրեան Հաստատութեան (Fondation Werner) Յանձնաժողովի որոշումից յետոյ (որի անդամներից մէկն է պ. Գրէգուար) Համալսարանի Սորհուրդն էլ իր նոյեմբեր 29ի նիստում ընդունեց Վէռնէրի նուիրատուութեան պայմաններն, որով եւ հաստատեց հայկական ամբիոնը: Միեւնոյն ժամանակ իբրեւ երախտագիտական ցոյց՝ նուիրատու Վէռնէրը ընտրուեց Համալսարանի

րանի Սորհուրդի անդամ: «Արեւելագիտական ճիւղի» ամբիոնների համար ուսուցչակետների անուանումն եւ հրաւիրումը յանձնուած է «Փիլիսոփայութեան եւ Գրականութեան ճիւղին», որի աւագն է, ինչպէս ասի, նոյն ճիւղին՝ Պրոֆ. Գրէգուար: Արդէն համաձայնութիւն է կայացած այս մասին եւ հայերէնի ամբիոնի համար հրաւիրուած է այդ պաշտօնին կատարելապէս համապատասխան մի անձ, որ է Պրոֆ. Նիկողայոս Ադոնց, որ մինչեւ վերջին տարիները նոյն պաշտօնը վարում էր Պետրոգրադի ուսուցչական համալսարանում: Նրա առանձին գրքով հրատարակուած երկերի մէջ ընդհանուր ուշադրութիւն է դրուած Armenia в Эпоху Остияна (Հայաստանը Յուստինիանոս կայսեր ժամանակ) հեղինակաւոր գործը: Նա ունի բազմաթիւ ուսումնասիրութիւններ Բիւքարէստէս եւ հայագիտութեան եւ եւրոպական զանազան ամսագրերում:

Պ. Գրէգուար այժմ ձեռնարկել է մի մեծ գիտական աշխատութեան, Corpus Bruxellense վերնագրի տակ բիւզանդական պատմագիրների հաւաքածոյի հրատարակութեան, որին ների հաւաքածոյի հրատարակութեան, որին հրաւիրուած է աշակցել նաեւ Պրոֆ. Ադոնց: Հայկական ամբիոնի բացումը պիտի կատարուի Բրիւքէլի համալսարանում առաջիկայ Յունուարի սկիզբը (1931): Աւելորդ է ասել, որ հայերէն լեզուն եւ պատմութիւնը պիտի աւանդուին Փրանսերէն լեզուով:

Այն դումարը, որ պ. Վէռնէր յատկացրել է հայկական ամբիոնին, դեռ բաւական չէ հայագիտութեան ճիւղին, անհրաժեշտ է ունենալ նաեւ հայագիտական մատենադաստան: Համալսարանի վարչութիւնն եւ Պրոֆ. Գրէգուար յոյս են տածում թէ կը գտնուին Գրէգուար յոյս են տածում թէ կը գտնուին Գրէգուարի հոգի, որոնք գրամով կամ գրքերով տակից հայեր, որոնք գրամով կամ գրքերով կը նպաստեն հայկական ճիւղի ապահովութեան: Միեւնոյն ժամանակ նրանք յոյս ունին թէ Բելգիական համալսարաններում սովորող հայ ուսանողներն էլ կ'արձանագրուին հայագիտութեան դասերին եւ իրենց ներկայութեամբ կը քաջալերեն օտար ունկընդիւններին:

ՍԱՐՈՒՆՍՆ

ՄՈՒՐԵՑՆԻ ՅԻՇՏՏԵԿԱՐԵՆԻ ՍԿԻՉՐԸ

Իմ ձեռքի տակ է գտնուում Մուրացանի ինքնաձեռագիր Յիշատակարանը, որ ինձ տրամադրել է հանդուցեալ վիպասանի այրին, տիկին Ոսկի Տէր Յովհաննիսեան:

Յիշատակարանը ամփոփուած է քառասուցալ եւ տողուած մեծ տետրի մէջ, կիսամաշ կազմով: Իւրաքանչիւր էջ ունի 31 տող, իսկ ամբողջ տետրը՝ 31 թերթ կամ 62 էջ, տողուած: Գրուած են սակայն առաջին 83¹/₄ էջերը միայն, իսկ մնացածը պարայ կն: Ակնհերեւ է որ Մուրացան կամեցել է Յիշատակարանի մէջ օր աւուր գրի անցնել իր կեանքի գլխաւոր դէպքերը եւ սակայն շատ շուտով լքել է այդ միտքը, որով եւ Յիշատակարանը կիսատ է մնացել դեռ հազիւ սկսուած: Որքան յիշում եմ, հանդուցեալ վիպասանը շատ ուշ, իր մահուանից մի քանի տարի առաջ, մի ուրիշ եղանակով կամեցել է լրացնել թողած գործը եւ «Լուսնայ» ամսագրում հրատարակել է իր ինքնակենսագրութիւնը: Դժբախտաբար ձեռքիս տակ չկան «Լուսնայ»ի հաւաքածուները, եւ ես հնարաւորութիւն չունիմ անձամբ վերստուգելու այդ ու, ճշտութեան դէպքում, այստեղ նշանակելու ամսագրի այն թիւերը, ուր սուրբագրուած են վիպասանի ինքնակենսագրութիւնը: Թերեւս «Հանդէս»ի խմբագրութիւնը բարի կը լինի եւ մի ծանօթութեան մէջ կը լրացնի այդ թիւերն:

Այսպէս կամ այնպէս, աւելորդ չհամարեցի Մուրացանի Յիշատակարանի սկիզբը, լինի նա թէկուզ մի բեկոր, «Հանդէս»ի միջոցով սեփականութիւն դարձնել հայոց նոր պատմութեան պատմութեամբ եւ ի մասնաւորի Մուրացանի կեանքով ու գործերով հետաքրքրուող անհատների:

Ձեռագրի վերնագիրն է՝ «Իմ Յիշատակարանը»: Անմիջապէս տակը աւելցած է՝ «18—85 Յունուար 1. առաւօտեան 1 ժամ 15 րոպէ»:

Այս վերնագիրը գետեղուած է առանձին, մի անտող երկթերթի առաջին էջի վրայ: Այդ երկթերթի միւս կէսը տետրի վերջում, ինչպէս նաեւ տողուած առաջին թերթի երկրորդ կէսը, դարձեալ տետրի վերջում, կտրուած եւ պահուած են: Վերնագրի թերթի (ձերմալ) երկրորդ էջը պարայ է: Այնուհետեւ միայն, ուրեմն տողուած թերթերից առաջին էջից հենց, սկսում է բուն Յիշատակարանը: Վերջինս էջերի թուահամարներ չունի: Միայն թէ «Յիշատակարանի» առաջին չորս էջերը, որ մի տեսակ յառաջարան են, հաստատուած են ինքնուրուի, թուով հինգ:

Առաջ ենք բերում ստորեւ «Յիշատակարանը», որ, ինչպէս ասացինք, միայն սկիզբն ունի եւ ակնհերեւաբար չի էլ շարունակուել յետոյ: Հեղինակի ուղղագրութիւնը պահ-

մանակնիդ անգամ ծուլանում էք ձեզ համար ջուր բերել եւ խմել. մի՞թէ դուք հաց ուտելու արժանի արարածներ էք»:

Իմ¹¹ պապը առհասարակ յայտնի էր իւր յիշոցներով: Բայց միեւնոյն ժամանակ եւ իւր փիլիսոփայութիւններով, իւր բազմափորձ կեանքից սովորած խրատականներով: Նա անկեղծ էր, աներկիւղ եւ ճշմարտասօս: Դիմացի մարդը եթէ նոյն ինքն Դիոնիսիոսը լինէր, դարձեալ նա նրան կը յանդիմանէր — եթէ յանդիմանութեան արժանի էր: Նա լաւ ձայն էլ ունէր. մինչեւ անգամ խոր ծերութեան ժամանակ եւ շատ սիրուն երգում էր եկեղեցական երգերը: Նա ինքը ասում էր որ արիւցուցութիւն էլ էր արել մի ժամանակ: Ես իմ պապին յիշում եմ բաւական քաջատղջ ժամանակ. բայց վերջերում ծերութիւնը յաղթեց նրան. նա ընկաւ անկողին. երկար տանջուեցաւ ծերութեան անկարողութիւնից եւ մեռաւ, կարծում եմ, ոչ պակաս հարիւր եւ տասը տարեկանից: — Այսպէս էին ասում գոնէ այն ժամանակ:

Բ.

Իմ պապ Դանիէլը իւր հօր նման երկու կին է ունեցել: Առաջինից՝ իմ ժամանակ կենդանի էր մի որդի, Կարապետ անունով — ուրիշներն էլ թէ եղել էին չգիտեմ — եւ այդ անդրանիկ որդին նոյնպէս իւր պապի եւ հօր բաղդին էր հանդիպել, այսինքն կինը մեռնելով, երկրորդն էր առել: Առաջինի ում աղջիկ լինելը չգիտեմ, միայն նրանից մնացել էր մի աղջիկ Զարգալամ անունով, որը եւ ամուսնացած էր Խաչի անունով մի դարձնի հետ: Իսկ¹² երկրորդ կինը մեր քաղաքի ամենից հարուստ եւ ամենից անխրա եւ ժլատ Բէկլարեանցի աղջիկն էր, որից եւ իմ հօրեղբայր Կարապետը ունեցել էր հինգ զաւակ: Մի աղջիկ Հոփիսիմէ անունով եւ չորս որդի, Աղարէկ, Հայրապետ, Աւետիս եւ Ներսէս — անուններով: Կարապետ հօրեղբայրս կէս ցնորուած մի մարդ էր իմ ժամանակ եւ բաժանուած էր մնում մեր ընտանիքից: Նրա համար պատմում են որ մի օր սուտ մեռել էր. եւ երբ բոլոր բարեկամները հաւաքուել եւ սկսել են լալ, յանկարծ վեր է կացել եւ ծիծաղելով պատմել որ ինքը այդ խաղը խաղացել էր, որ իւր բարեկամները ժողովուրդին իրենց տուն եւ մի փոքր ժամանակ անցկացնեն իւր հետ:

Իմ պապի երկրորդ կինը, որի անունը Թաթեան է եղել, ծնել է նոյնպէս հինգ զաւակ, որոնցից երկուսը աղջիկ, Եղիսաբեթ եւ Նախչան անուններով եւ երեք տղայ, Ալլահադէր, Մնացական եւ Մարգիս անուններով:

¹¹ Սկսում է ութերորդ էջը: ¹² Սկսում է կենեկորդ էջը:

Այստեղ վերջանում է Մուրացանի «Յիշատակարան»ը: Անմիջապէս վերջը շոկ թանաքով աւելցուած են հետեւեալ բառերը. «Թիֆլիս 1892 Յուլիս 2 ժամ 6 երեկուայ»: Որոշ է ուրեմն որ 1885ի Յունուար 1ին սկսած իր «Յիշատակարան»ը Մուրացան ընդհատել է անմիջապէս եւ ըստ երեւութիւն տարիներ անցներուց յետոյ միայն, 1892 թ. Յուլիս 2ին, կամեցել է շարունակել այն: Այդ եւս անկատար է թողել սակայն ու հազիւ միայն վերոյիշեալ մի քանի բառը գրել: Արդէն բոլորովին ուրիշի ձեռքով եւ մատիտով, անմիջապէս յետոյ աւելցուած են մի քանի անուններ, արանց եւ կանանց, որոնք դարձեալ վերաբերում են Մուրացանի գերդաստանի անդամներին:

Ահա ուրեմն, Մուրացանի «Յիշատակարան»ի սկիզբը — բեկորը — Դա յիշատակարան, յուշատետր էլ չէ դեռ, այլ հեղինակի ինքնակենսագրութեան սկիզբը, մի քանի տեղեկութիւններ իր ծագման մասին: Այնուհետեւ է միայն, ինքնակենսագրութիւնը մինչեւ 1885 տալուց յետոյ է որ հեղինակը որոշած է եղել պահել Յուշատետր: Այդ մտադրութիւնը եւս մնացել է անկատար, ինչպէս նաեւ ուրիշ անգամներ գրանից առաջ:

Մուրացանի ինքնածեղանքի «Յիշատակարան»ի մէջ կար նաեւ մի առանձին թերթ, որի վրայ հեղինակը նշանակել է, դարձեալ սեփական ձեռքով, իր հեղինակութիւնները վերնագրիները, եւ թէ ե՞րբ եւ ո՞րք են նրանք առաջին անգամ լոյս տեսել: Ըստ երեւութիւն նա այդ ցանկը կաղմել է՝ իր դրուածքները առանձին հատորներով լոյս ընծայելու առաջադրութեամբ: Յանկի ետեւը, թերթի առաջին էջի վրայ էլ հեղինակը կարմիր մատիտով գրել է վերնագիրը — «Իմ սպառնալի երկերը»: Հեղինակի կենդանութեան օրով լոյս տեսաւ իր դրուածքների առաջին հատորը միայն — «Մուրացանի երկասիրութիւնները. Նոյի Ազուարը, Առաքեալը, Խորհրդաւոր Միանձնուհի», Թիֆլիս, 1904: Երկերի ժողովածուի երկրորդ հատորի սպառնալիները սկսուել է ըստ երեւութիւն հեղինակի մահուանից (1908 թ. Օգոստ. 26) առաջ դեռ, բայց նոյն թուականին արդէն, ինչպէս որ տեսնում ենք հատորի վերնագրի թերթից (Թիֆլիս 1908): Լոյս է տեսել նա սակայն երկու տարի յետոյ միայն, 1910ին, ինչպէս որ նշանակուած է գրքի կողքի վրայ: Այդ երկրորդ հատորի մէջ մտնում են հեղինակի «Ռուզան» եւ «Անդրէաս երէց» գրուածքները: Սկիզբը կցուած է հեղինակի մի գրութիւնը — «Ռուզան»ը եւ նրա քննադատները վերնագրով:

Առաջին հատորի յառաջաբանում հեղինակն ասում է. «Հետեւելով ասածին թէ՛ «լաւ է ուշ՝ քան երբէք», որոշեցի վերջապէս առանձին գրքերով հրատարակել իմ երկասիրութիւնները, որոնք 1880ից սկսած մինչեւ ներկայ թուականը հետզհետէ լոյս են տեսել մեր պարբերական թերթերում, բայց չարտատուելով՝ մնացել էին ցարդ այդ թերթում ցիրուցան: Այդ դիտարկութեամբ բոլոր գործը բաժանեցի տասը հատորներով՝ «Ներքին բովանդակները հասարակելով «Ներքին բովանդակները համաձայն»: Այդ տասը հատորներին լոյս տեսան դժբախտաբար երկուսը միայն:

նակն ասում է. «Հետեւելով ասածին թէ՛ «լաւ է ուշ՝ քան երբէք», որոշեցի վերջապէս առանձին գրքերով հրատարակել իմ երկասիրութիւնները, որոնք 1880ից սկսած մինչեւ ներկայ թուականը հետզհետէ լոյս են տեսել մեր պարբերական թերթերում, բայց չարտատուելով՝ մնացել էին ցարդ այդ թերթում ցիրուցան: Այդ դիտարկութեամբ բոլոր գործը բաժանեցի տասը հատորներով՝ «Ներքին բովանդակները հասարակելով «Ներքին բովանդակները համաձայն»: Այդ տասը հատորներին լոյս տեսան դժբախտաբար երկուսը միայն:

Աւելի ուշ, բայց ոչ իբրեւ շարունակութիւն սկսուած գործի, այլ որպէս ինքնուրոյն հրատարակութիւն, Կովկասի հայոց հրատարակչական ընկերութիւնը առանձին հատորով լոյս ընծայեց «Գէորգ Մարգարէտունի» պատմական վէպը (Թիֆլիս 1912), որ հեղինակի գլուխ գործոցն է համարում: Գժբախտաբար, այդ բոլոր հատորները ներկայիս գրեթէ անկարելի է ձարել գրական շուկայում, որով եւ Մուրացանը — ինչպէս նաեւ մեր շատ հեղինակներ — անձանօթ են մնում երիտասարդ սերունդին:

Առաջ եմ բերում ինքնածեղանքի ցանկը:

Թուական	Ամիս	Լրագիր	Երկեր
1882	Փետրուար	Ներկայացուեց Մեղուում	Ռուզան
1883	«	Նոր Դար	Հայ բողոքականի ընտանիքը
1884	«	«	Հասարակաց որդեգիրը
1884	Մայիս	«	Իմ երջանկութիւնը
1884	Յունիս	«	Խօշիվանքում
1884	Յուլիս	«	Հարուստները զուարճանում են
1885	Ապրիլ	«	Իմ կաթոլիկ հարսնացուն
1886	Յունուար	«	Անպատճառ իշխանուհի
1886	Մայիս	«	Միթէ վայել է
1886	Դեկտեմբեր	«	Զհաս է
1890	—	«	Հանելուկը լուծուեցաւ
1891	—	«	Երկուսից որը
1903	—	«	Լուսաւորութեան կեդրոնը
1889	—	«	Խորհրդաւոր Միանձնուհի

Մ Ա Ն Ր Ա Պ Ա Տ Ո Ւ Մ

Թուական	Ամիս	Լրագիր	Երկեր
1897	Յունուար	Արձագանքում	Երէկ եւ այսօր
1897	Փետրուար	«	Տիկին Փիլալեան
1897	Յուլիս	«	Նախկին Ազգասիրի Գաղտնիքն
1897	«	Դեկտ. 25	Մարդը մտադիր կ'իւր կարգադիր
1896	Մարտ 2-ից մինչեւ	Լուծմա	Գէորգ Մարգարէտունի
1902	Մարտ-Ապրիլ	«	Ինչու իմ ստորագրութիւնը չընդունեցի
1902	Մայիս-Յունիս	«	Յատուկ թղթակիցը
1903	Մարտ-Ապրիլ	«	Գթութեան քոյրեր
1899	Յունիս	Թատրոն	Պակների բողոքը
1899	Յունիս	Լուծմա	Ցպահանջ
1899	—	«	Նոյի Ազուարը
1902	—	«	Առաքեալը
			Անդրէաս երէց

Բոլոր պարագաներում, այդ ցանկն եւս անկարելու չհամարեցինք առաջ բերել այստեղ:

ԳՈՎՏ. Ա. ԱՐԵՂԵԱՆ

